«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/06»

ք. Երևան 23 04 2026թ.

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ-ն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղար Լուսինե Սարգսյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և **«ՍԻՆԵՐՋԻ ԻՆԹԵՐՆԵԾՆԸԼ ՍԻՍԹԵՄԶ» ԲԸ մ/ճ ԱՍ-ն,** (այսուհետ՝ Կատարող), ի դեմս մասնաճյուղի տնօրեն՝ Աննա Ստեփանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն) համաձայն սույն Պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 Հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 33.428.400 (երեսուներեք միլիոն չորս հարյուր քսանութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է, և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը: Ընդ որում, հայտարարագրման օրենսդրական վերջնաժամկետներով պայմանավորված ծանրաբեռնվածությունը հաշվի առնելով՝ վճարումները կատարվում են հետևյալ հաշվետու ժամանակահատվածների համար՝ ապրիլ, մայիս-հունիս, հուլիս-օգոստոս-սեպտեմբեր և հոկտեմբեր-նոյեմբեր-դեկտեմբեր: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող է սահմանվել նաև վճարման այլ ժամանակահատված:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի Հավելված N 1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք

կիանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Կատարողներից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Կատարողների՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Կատարողների՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին,

եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.11 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 Հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ	**«ՍԻՆԵՐՋԻ ԻՆԹՐՆԵԾՆԵԼ ՍԻՍԹԵՄԶ» ԲԸ մ/ճ ԱՍ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի փող. 15	Հասցե՝ ք. Երևան, Արմենակ Արմենակյան փ. 2/4շ.
ՀՎՀՀ՝ 00171676	ՀՎՀՀ՝ 01534707
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Բանկը՝ ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ՝ 900011019057	ՀՀ՝ 2470094672070000
Գլխավոր քարտուղար՝ Ա. Սարգսյան	Տնօրեն Ա. Ստեփանյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված N 1
23 04 2026թ. կնքված
«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/06» ծածկագրով Պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության						
Չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	Մատուցման ժամկետը
1	72261160/2	Ընկերությունը պետք է ապահովի համակարգի վերահսկման և թարմացման գործառույթները, բոլոր տեխնիկական խնդիրների և նույնիսկ աննշան փոփոխությունների պահանջների ժամանակին լուծումը: • Համակարգի խափանման դեպքում թերությունների վերացում - Սխալների շտկումներ և համապատասխան թարմացումների տրամադրում, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական տեղեկատվության տրամադրում՝ համակարգի հայտնաբերված անսարքությունները լուծելու համար, եթե այդպիսիք կան: Բացի այդ, իրականացնել փոքր փոփոխությունների շտկումներ: • Կանխարգելիչ սպասարկում - Անվտանգության նախազգուշացումներ և կրիտիկական անվտանգության թարմացումներ, • Արտակարգ սպասարկում - Խորհրդատվություն շահագործման հարցերի վերաբերյալ հեռախոսով և էլեկտրոնային փոստով, • Ծրագրային ապահովման սպասարկում - Վերջին տարբերակների ծրագրային ապահովման և օպերացիոն համակարգի թարմացումներ • Տվյալների բազայի ողջամիտ կարգավորում, տվյալների որակի վերանայում, սպասարկման հաշվետվություններ, լիցենզիայի թարմացումներ և ցանկացած այլ սպասարկման միջոցառումներ և հաշվետվություններ՝ համակարգի պատշաճ գործունեությունն ու աշխատանքը ապահովելու համար: •Համակարգի օպերատիվ կատարողականի մոնիտորինգ- Ժամանակին և արդյունավետ արձագանքել և լուծել ԿԿՀ-ի բարձրացրած խնդիրները: Մասնավորապես, արձագանքել Հանձնաժողովի կողմից ներկայացված ծառայությունների հետ կապված միջադեպերին կամ հարցումներին: Ժամկետները և առաջնահերթությունները որոշվելու են ըստ ստորև նշված տեխնիկական սպասարկման ենթակա խնդիրների առաջնահերթության մակարդակների: Մատակարարը տրամադրում է հատուկ գործիք՝ Synergy Service Desk-ը, որն առցանց հարցումների/ խնդիրների հետևման գործիք է, որտեղ լիազորված օգտվողները/ադմինիստրատորները կներկայացնեն խնդիրները, կվերանայեն փոփոխությունների կարգավիճակը, կհաղորդակցվեն Synergy-ի մշակման թիմի հետ	դրամ	33.428.400	1.00	Պայմանագրի կնքման պահից մինչև 25.12.2026թ.

		և կհաստատեն փոփոխությունները (այդպիսով փակելով հարցումը): Պատասխանել հաճախորդի համապատասխան սկզբնական պահանջին: Դա կարող է լինել էլեկտրոնային փոստի կամ հեռախոսազանգի տեսքով՝ լուծում տալու կամ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու համար: Վերոնշյալ առաջնահերթությունները սահմանվում են հետևյալ կերպ, Բարձր՝ Ծրագրային ապահովման ամբողջական կամ զգալի խափանման դեպքում: Կրիտիկական գործառույթները ազդել են ծրագրային ապահովման վրա: Արձագանքման ժամկետ՝ 24 ժամ: Լուծման առավելագույն ժամկետ՝ 1 աշխատանքային օր: Միջին՝ Սահմանափակվում է առանց խափանման: Սահմանափակ կամ երկրորդային ֆունկցիաներ են ազդում: Կրիտիկական գործառույթները չեն ազդում, և Ծրագրային ապահովումը շարունակում է գործել: Արձագանքման ժամկետ՝ 48 ժամ: Լուծման առավելագույն ժամկետ՝ 2-5 աշխատանքային օր: Ցածր՝ Ոչ մի խափանում չկա, իսկ առաջացած խնդիրները ոչ մի ազդեցություն չի ունենում ծրագրային ապահովման կրիտիկական գործառույթների վրա: Արձագանքման ժամկետ՝ 1-3 աշխատանքային օր: Լուծման առավելագույն ժամկետ՝ 5-10 աշխատանքային օր: Աջակցության թիմը Հաճախորդին կտրամադրի հետևյալ բազմամակարդակ աջակցությունը. **Tier I.** Tier I-ի անձնակազմը (ԿԿՀ-ի աջակցության գրասենյակ) տրամադրում է աջակցություն օգտագործողների հիմնական հարցումներին՝ օգտագործման խնդիրների լուծում, պարզ հարցերի պատասխաններ, ցանցային և SS ներգրավում պահանջող խնդիրների կարգավորում: Եթե խնդիրը լուծելի է այս մակարդակում, Tier I-ի անձնակազմը փակում է հարցումը, թարմացնում կարգավիճակը և համալրում գիտելիքների բազան: Լուծում չլինելու դեպքում հարցումը բարձրացվում է հաջորդ մակարդակ: **Tier II.** Tier II-ում մատակարարը լուծում է Tier I-ից փոխանցված հարցումները: Նշանակված մասնագետներն անմիջապես տեղեկանում են նոր հարցումների մասին, վերարտադրում խնդիրները և բացահայտում դրանց հիմնական պատճառները: Եթե հարցումը ճանաչվում է որպես բարդ խնդիր կամ սխալ, որը լուծելի է այս մակարդակում, Մատակարարը կատարում է համապատասխան շտկումը և փակում հարցումը: Լուծումից հետո կարգավիճակը թարմացվում է, և ծանուցում է ուղարկվում բոլոր ներգրավված շահագրգիռ կողմերին: Լուծում չլինելու դեպքում հարցումը բարձրացվում է Tier III: **Tier III.** Եթե հարցումը վերաբերում է նոր գործառույթի մշակմանը, առկա գործառույթի փոփոխությանը կամ մատակարարի կողմից շտկման ենթակա ծրագրային սխալի, այն փոխանցվում է ծրագրի ղեկավարին: Ծրագրի ղեկավարը լուծումը և փոփոխությունները համաձայնեցնում է ծրագրի տեխնիկական թիմի հետ:				

		Շահառուների (տեխնիկական թիմ, ԿԿՀ-ի աջակցության գրասենյակ) հետ առաջնահերթությունը համաձայնեցնելուց հետո համապատասխան փոփոխությունները ներառվում են հետագա թողարկումներում, շտկումներում կամ ծրագրային թարմացումներում: Ծրագրի ղեկավարը համակարգում է հարցման լուծումը կամ իրականացումը տեխնիկական թիմի հետ: Լուծման և առաջնահերթության համար նշանակված շահագրգիռ կողմի թիմի հետ համաձայնեցնելուց հետո համապատասխան լուծումը տրամադրվում է հետագա թողարկումներում կամ ծրագրային ապահովման թարմացումներում: Մատակարարը հնարավոր սեղմ ժամկետներում ձեռնամուխ է լինում առաջացած տեխնիկական խոտանների (bug) վերացմանը, որոնք իրականացվում են անսահմանափակ հիմունքներով՝ ըստ Պատվիրատուի կողմից ներկայացված անհրաժեշտության, ինչպես նաև նախաձեռնում է միջոցառումներ՝ դրանց հետագա առաջացումը կանխարգելելու նպատակով: Սահմանված տեխնիկական խոտանների վերացումը ենթակա չի սույն պայմանագրով սահմանված մարդ/ժամ հաշվարկի՝ ամսական 40 մարդ/ժամ և ռեզերվային 160 մարդ/ժամ սահմանաչափերի կիրառմանը: Մատակարարը պարտավորվում է համակարգում փոփոխություններ ենթադրող առաջադրանքների իրականացման համար յուրաքանչյուր հաշվետու ամսվա ընթացքում նախատեսել ոչ ավելի քան 40 մարդ/ժամ ծավալ: Հաշվետու ամսվա ընթացքում չօգտագործված մարդ/ժամերը հաջորդ ամիս չեն փոխանցվում: Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ համակարգի սպասարկման համար հատկացված գումարը նախատեսված է եղել ամբողջ տարվա սպասարկման համար, մինչդեռ ըստ պայմանագրի աշխատանքները ամբողջ ծավալով սկսվելու են պայմանագրի կնքումից հետո, ուստի 01.01.2026 թվականից մինչև պայմանագրի կնքումը նախատեսված գումարը համամասնորեն պետք է բաշխվի հետագա ամիսներին և Մատակարարը պետք է տրամադրի լրացուցիչ 160 մարդ/ժամ ծավալ ընդհանուր ռեզերվային ռեսուրս, որը կարող է օգտագործվել Կողմերի նախնական համաձայնությամբ: Մատակարարը պարտավոր է ապահովել, որ համակարգի տվյալները պաշտպանված լինեն ոչ լիազորված մուտքից՝ բոլոր մակարդակներում: Բոլոր անվտանգության միջոցները պետք է իրականացվեն համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տեղեկատվական անվտանգության ժամանակակից լավագույն փորձի: Համակարգի ֆունկցիոնալ զարգացում և արդիականացում՝ միտված տեղեկատվական շտեմարանների փոխգործելիության ապահովմանը և համակարգի լավարկմանը: Մատակարարը պատավորվում է, ըստ Պատվիրատուի սահմանած առաջնահերությունների, ապահովել համակարգի պետական տեղեկատվական շտեմարանների հետ փոխգործելիությունը (ՊԵԿ, ՄՄԾ, ՔԿԱԳ, համապատասխան համաձայնության առկայության դեպքում նաև՝ Դեպոզիտարիա, Վարկային բյուրո և այլն): Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ նշված ինտեգրացիաները				

		դիտարկվում և իրականացվում են յուրաքանչյուր ամսվա համար հատկացված 40 աշխատաժամերի շրջանակում: Սպասարկման պայմանագրի ավարտից հետո մատակարարը պարտավորվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին փոխանցել ծրագրային ապահովման վերջնականացված կոդային բազան (Source Code)՝ համապատասխան փաստաթղթավորմամբ, ինչպես նաև դրա նկատմամբ հեղինակային իրավունքները: Անձնական տվյալների մշակմամբ զբաղվող աշխատակիցները պարտավորվում են օգտագործել բազայում առկա տվյալները բացառապես համակարգի սպասարկման և գործառնական անհրաժեշտությունից բխող նպատակներով: Արգելվում է տվյալների ցանկացած այլ օգտագործում, ներառյալ՝ դրանց դիտումը, պատճենումը, փոխանցումը կամ տարածումը, եթե դա չի բխում իրենց ծառայողական պարտականություններից կամ չի նախատեսված սույն պայմանագրով:				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի փող. 15
ՀՎՀՀ՝ 00171676
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
ՏՀՀ՝ 900011019057
Գլխավոր քարտուղար Է. Մարգսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԻՆԵՐՋԻ ԻՆԹՐՆԵՇՆԼԻ ՍԻՍԹԵՄԶ» ԲԸ մ/ճ ԱՍ
Հասցե՝ ք. Երևան, Արմենակ Արմենակյան փ. 2/4շ.
ՀՎՀՀ՝ 01534707
Բանկը՝ ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ՝ 2470094672070000
Տնօրեն Ա. Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
23.04 2026թ. կնքված
«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/06» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160/2	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների	3.714.266	7.428.532	11.142.798	14.857.064	18.571.330	22.285.596	25.999.862	29.714.130	33.428.400	33.428.400

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ» ՊՄ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի փող. 15
ՀՎՀՀ՝ 00171676
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011019057
Գլխավոր քարտուղար՝ Է. Սաթգսյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՍԻՆԵՐՋԻ ԻՆԹՐՆԵՇՆԼ ՍԻՍԹԵՄԶ» ԲԸ մ/ճ ԱՍ
Հասցե՝ ք. Երևան, Արմենակ Արմենակյան փ. 2/4շ.
ՀՎՀՀ՝ 01534707
Բանկը՝ ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
ՀՀ՝ 2470094672070000
Տնօրեն Ա. Ստեփանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3.1
___ _____ 2026թ. կնքված
«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/06» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը Պայմանագրի համարը

գնման Պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
___ _____ 2026թ. կնքված
«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/06» ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ ,
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
գնորդի անվանումը վաճառողի անվանումը

«--------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
վաճառողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.

Հավելված 3
___ _____ 2026թ. կնքված
«ԿԿՀ-ՄԱԾՁԲ-26/06» ծածկագրով պայմանագրի

Կատարող	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ Ծառայությունները՝

N	Մատուցված Ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.